

213. Մէլըք կգեայ ուր չտարրը տակ, մօր կըսի.— Իս երեք դարպ Գաւթըն զարկի, Գաւթը սկի բան չէրաց, Գաւթի կգեայ էս տե տը զարկի.

—Մէլըք, կըսի մէր, մտը էդա խուրը մէջ:

214. Մէլըք կը մանը խուրը տակ.

Քեառսուն գեօմշու կաշը կը դնը վերայ.

Քառսուն ջաղչը քեար կը դնը վերայ.

Լխեքեր կը քեշի քեարերու վերայ:

215. Մէրն կըսի.— Իմ տղէն, Գաւթի, յառէջ քե կըսիմ մի գարկի. վուր կը զարկես, էրէ՛, դար:

Գաւթի գիտի ինչ էրեր է:

Կգեայ, տիսնայ ջաղչի քեար, չէ որ խուրու բերնի դրած սկօն բանձրացեր է, լիս քեշած քեարերու վերէն, դտի վուր էնքան Մէլըքի ջանաակ չի:

Ապա մէր էն տե կանգնուկ է:

Գաւթին էլ չըսի Մէլըք խանէք դիւս, տիսնամ:

216. Գաւթի գթուր կէծակին կը քեշի, համա թո՛ւր կը վերցի, կը բերի վուր տը զարկի, էլ չգարկի կըսի.

—Մարէ՛, էդա մէկ դարպ տուիմ քե խաթը, վուր դիւր ըծը պախիւր էս:

Մէկ էլ թուր կը վերցի վուր զարկի, կըսի.

—Ատոււած, էդ էլ տուիմ քե խաթը, վուր իմ կուր քեօ ձեռնովն է:

217.—Մարէ՛, էսայ Գաւթի, ըծը մնացեր է մէկ դըարպ:

Մէրն էդա կնկախրուն, էդա շաւար քեշողքերուն կըսի.— Շիւտ շաւար քեշէք: Փուղը տիրուջ.— Շիւտ վուղ լիչէք: Նազարա զարկողքերուն.— Շի՛ւտ, նազարա զարկէք: Աղջկախրուն.— Շի՛ւտ, ձի քեաֆկախր¹ բունէք ձի ձեռ, խաղցէք:

--Կընկախր, դիւ էյ ձի քեաֆկախր բունէք ձի ձեռ, խօրտտ խաղցէք, բալի Գաւթ ըրշկայ, ձի տիսնայ, չգտի Մէլըքի տեղ. Գաւթը դարպ էնու շառնը:

218. Ապա Գաւթի գտի.— էդա ըծը յապեօլ կէնըն, կըսի, ըծը շշկոացնին:

Գաւթին է, գեօր թուր կը զարկի.

Վուր կը զարկի, ջաղչը քեար կը կառի.

Քեառսուն գեօմշիւ կաշըն կը կտրը.

Կը տանը Սիվ ջիւր կը կայնացըցի:

219. Գաւթի կըսի.— Մարէ՛, բացէք յիտ, իս տիսնամ գՄէլըք:

2. Քեաֆկիր—Պղնձէ շերեփ ծակոտիներով: